ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության «Մենեջեր՝ հյուրանոցների և զբոսաշրջային համալիրների որակավորման» մասնագիտական մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝

1. Մասնագիտական մոդուլներ դասավանդվող դասախոսի դեպքում հիմնարար համարվող որակավորմամբ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցման վկայական և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ,
2. Դասախոսի վարձատրությունը որոշվում է ըստ հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի և դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով՝ ըստ քոլեջի կողմից կազմված բանավոր առաջադրանքների, որոնք առնչվում են դասավանդվող առարկային(մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում՝ (Ձև 1),
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագրի (բնօրինակը և պատճենը) ,
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում) :

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում (սեպտեմբերի 1 -ից սեպտեմբերի 14 -ը ներառյալ), ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենա սեպտեմբերի 19 -ին՝համապատասխանաբար ժամը – 16^{00}.- -ին Չարենցավանի պետական քոլեջում: Հասցեն՝ ք. Չարենցավան, Խորենացի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0226) 4-32-82, (374) 77599675, 77614520 հեռախոսահամարներով: